ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, (010) 250519, (0235) 22383 artashatmeria@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
17 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 835-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 7 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի՝ Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին թիվ 02-Ն հրամանով՝ **որոշում եմ.**

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի «Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ 7 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2023 թվականի մարտի 21-ին անցկացնել մրցույթ:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոռ Նազարյանին՝

1) նախապատրաստել և ապահովել մրցույթն անցկացնելու մասին հայտարարության հրապարակումը,

2) կազմակերպել մրցույթի անցկացման նախապատրաստական աշխատանքները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՌԼԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

2023 թ. փետրվար 17
ք.Արտաշատ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ «ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 7 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնները զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացիները, ովքեր ունեն՝

1. Բարձրագույն կրթություն
2. Համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:
3. «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով սահմանված չափանիշները բավարարող անձը:

4. Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝
   ա/ տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
   բ/ ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն
   գ/ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն
   դ/ աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ
   ե/ ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն
   զ/ առնվազն մեկ օտար լեզվի իմացություն
   Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝
   ա/ դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
   բ/ տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.
   գ/ օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայության.
   դ/ դատապարտվել է հանցագործության կատարման համար և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.
   ե/ զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից կամ որին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել.
   զ/ ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում սույն կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են.
   է/ 65 տարին լրացած քաղաքացիները:

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացիները Արտաշատի համայնքապետարանի աշխատակազմ են ներկայացնում

1. դիմում.
2. մեկ լուսանկար /3x4/.

5. անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի /արական սեռի անձինք՝ նաև զին. գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի/ պատճենները.
6. տեղեկանք՝ մշտական բնակության վայրի.
7. հրապարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում/:

Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող փաստաթղթով:
Մրցույթը տեղի կունենա 2023 թվականի մարտի 21-ին ժամը 11:00-ին Արտաշատի համայնքապետարանում:

Դիմողները փաստաթղթերը կարող են ներկայացնել աշխատանքային օրվա ընթացքում, ժամը 09:00-ից մինչև 18:00-ն նշված հասցեներից որևէ մեկով՝
1. 1. <u>Արտաշատի համայնքապետարան՝</u>
Ք.Արտաշատ Օգոստոսի 23-ի փողոց թիվ 62,
4-րդ հարկ, քարտուղարության անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին
Հեռախոս /0235/2-36-39
1. 2. <u>Արարատի մարզպետարան</u>
Ք.Արտաշատ Օգոստոսի 23փողոց թիվ 60
5-րդ հարկ, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն
Հեռախոս՝ /0235/2-34-65
Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է 2023 թվականի մարտի 10-ը:

ԱՐՏԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՄԿՐՏՉՅԱՆ